Հ.Հ. Արմավիր մարզի
Վանանդի համայնքապետարանի

2019 թ. տարեկան հաշվետվությունը

համայնքի բնակիչներին 10.02.2020թ.
կայացած ընդհանուր ժողովում

Համառոտ ծանոթություն առ 01.01.2020թ. դրությամբ

1. Տնտեսությունների թիվ --- 215

Բնակչության թիվ --- 1121

որից տղամարդ --- 602

կին --- 519

2. Թոշակառուներ --- 98

3. Նպաստառուներ --- 40

4. Դպրոցի երեխաներ --- 173

5. Ուսուցիչներ --- 29

2020թվականի փետրվարի 10-ին տեղի ունեցավ ընդհանուր ժողով՝ մասնակցությամբ Վանանդ համայնքի անդամների և Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վարազդատ Մկրտչյանի:

Լսեցին Վանանդ համայնքի ղեկավարին 2019թվականի տարեկան հաշվետվությունը:

Զեկույցով ելույթ ունեցավ Վանանդ համայնքի ղեկավար Ջ.Մանուկյանը և ներկայացրեց 2019թվականի տարեկան հաշվետվությունը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման» մասին օրենքով և Արմավիրի մարզպետարանի ամենօրյա օժանդակությամբ 2019թ. տնտեսական տարին սկսեցինք ավագանու կողմից ընդունված ծրագրերի համապատասխան:

Հաշվետու տարում կայացել է ավագանու 14 նիստ: Հիմնականում քննարկվել են 2019թ. համայնքի բյուջեի փոփոխության և այն կատարելու հարցերը:

Ավագանու նիստերում քննարկվել են համայնքի սոցիալական այլ ոլորտի հարցեր:

Համայնքապետի կողմից ընդունվել է համայնքին առնչվող 53 որոշում, 8 կարգադրություն:

Համայնքապետարանի և ավագանու ուշադրության կենտրոնում են եղել համայնքի բնակիչների կողմից բարձրացված հարցերը և Արմավիրի մարզպետարանի կողմից տրված հանձնարարականների կատարումը:

2019թ. ընթացքում համայնքապետարանը ստացել է տարբեր բնույթի դիմումներ, որոնց տրվել է սպառիչ և օրինական ընթացք: Արմավիրի մարզպետարանից և այլ կազմակերպությունների կողմից ստացվել են 241 տարբեր բնույթի պաշտոնական գրություններ: Նշված գրությունները օրինական կարգով մուտքագրվել են, և ժամանակին տրվել է օրինական ընթացք: Համայնքապետարանի կողմից տարբեր կազմակերպությունների է ուղարկվել 246 գրություններ: Բնակիչների պահանջով տրվել են տարբեր բնույթի 98 տեղեկանքներ:

Համայնքի հուզող և հրատապ հարցերից է համայնքի 4կմ երկարությամբ ոռոգման ցանցի հիմնանորոգումը՝ որը հրատապ ծրագրով և սուբվենցիայի ծրագրով 2020թվականի ընթացքում կիրականացվի:

Մարզում հրատապ լուծում պահանջող խնդիրների շարքում ներառվել էր Վանանդ համայնքի ոռոգման համակարգի մի մասի հիմնանորոգման աշխատանքները՝ հրատապ ծրագրով, որի համար նախատեսվել էր 15000000դրամ, որից համայնքի համաֆինանսավորման չափը կազմում է 3750000 դրամ: Դրա չափով փոխատվություն է վերցվել համայնքի ֆոնդային բյուջեից:

Կառավարության սուբվենցիոն ծրագրով ներկայացվել էր նաև համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի հրատապ ծրագրից դուրս մնացած մասը որի նախագծային հաշիվը կազմում էր դրամ որից համայնքի համաֆինանսավորման չափը կազմում է 3750000 դրամ:

Նշված երկու ծրագրերն էլ իրականացվել են 2019 թվականի ընթացքում ժամանակին և անհրաժեշտ որակով:Ծրագրերի իրականացման միջոցով հիմնովին լուծվեց համայնքի ներտնտեսային ոռոգման համակարգի անխափան աշխատանքի հարցը:

2019թվականի հուլիս ամսից դրամաշնորհի պայմանագիր կնքվեց <<Վանանդի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի հետ՝ համայքնի մանկապարտեզի վերաբացման համար: 2019 թվականի նոյեմբերին ավարտվեց դրամաշնորհի պայմանագրի կատարման ժամկետը և մանկապարտեզի հարցի վերջնական լուծման համար համայնքապետարանը ստեղծեց << Վանանդի մանկապարտեզ>> ՀՈԱԿ: Վանանդի միջնակարգ դպրոցից տարածքը ՀՈԱԿ-ին անհատույց և անժամկետ տրամադրելու պայմաններում համայնքը կունենա մշտական գործող մանկապարտեզ:

2019թվականի գարնանը լիցքավորվել և նախապատրաստվել են հակակարկտային կայանները, որի շնորհիվ համայնքում կարկտահարության դեպքեր չեն գրանցվել:

Պատշաճ ձևով համայնքում կազմակերպել ենք աղբահանության աշխատանքները և մասնակցել <<Մաքուր Հայաստան>> ծրագրի շրջանակներում կազմակերպված շաբաթօրյակներին:

Նշված դրական աշխատանքների կողքին, համայնքապետարանը ունի նաև թերություններ: Մեծ աշխատանք պետք է կատարվի նաև փողոցների ասֆալտապատման, կանաչապատման և հանդիսությունների՝ սրահի կառուցման գործում, որոնք ևս աշխատելու ենք լուծել սուբվենցիոն ծրագրերի միջոցով:

Իսկ այդ աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է նաև որ համայնքի բնակիչները ևս կատարեն իրենց պարտականությունները: Մինչև օրս կան շատ սեփականատերեր և վարձակալներ, ովքեր չեն կատարել իրենց հարկային պարտականությունները: Ուստի օգտվելով առիթից կոչ եմ անում բոլոր ներկաներին, վճարել հողերի հարկերն ու վարձավճարները, որպեսզի համայնքապետարանը կարողանա ավելի շատ ծրագրեր կյանքի կոչի:

Հարգելի համագյուղացիներ Ձեզ եմ ներկայացնում համայնքի 2019թ. Տարեկան բյուջեի կատարման պլան- կատարողականը:

# Արմավիրի մարզի Վանանդ համայնքի 2019թ. տարեկան բյուջեի եկամուտների կատարման հաշվետվություն

| N | Եկամուտի անվանումը | Պլան | կատարողական | կատարման % |
|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 11934.0 | 13335.2 | 111.7% |
| 2 | Գույքահարկ | 2551.4 | 2031.6 | 79.6 % |
| 3 | Վարձավճար հողի | 631.5 | 384.9 | 60.9% |
| 4 | Տեղական տուրք | 146.0 | 134.1 | 91.8% |
| 5 | Դոտացիա | 8382.9 | 8382.9 | 100 % |
| 6 | Օրենքով այլ վճարներ | 2836.0 | 1317.3 | 46.4% |
| 7 | Այլ եկամուտներ | 698.9 | 824.6 | 118% |
| 8 | Ընդամենը | 27180.7 | 26356.5 | 97% |
| | | | | |
| | | | | |

Իհարկե այդ ցուցանիշները մարզի կտրվածքով դրական են, սակայն մեր համար գոհացուցիչ չեն, և ես հույս ունեմ որ 2020թ. տնտեսական տարում կանենք ամեն ինչ, որպեսզի այս ցուցանիշները բարձրանան և նոր սոցիալական ծրագրեր իրականացվեն:

Վանանդի համայնքապետ Ջ.Մանուկյան

Գլխավոր հաշվապահ Ա.Դալալոյան

Արմավիրի մարզի Վանանդ Համայնքի 2019թ տարեկան
բյուջեի ծախսերի կատարման հաշվետվություն

| Հ/Հ | Ծախսերի անվանումը | 2019. պլան | Կատարողական | Կատարման % | Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ընդամենը վարչական բյուջե | 14697.9 | 14508.8 | 98.7 | |
| 2 | Օրենսդիր և գործադիր մարմին | 14697.9 | 14508.8 | 98.7 | |
| 3 | Աղբահանում | 960,0 | 960 | 100 | |
| 4 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություն | 28.8 | 28.8 | 100 | |
| 5 | գյուղատնտեսություն | 800 | 800 | 100 | |
| 6 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն | 10,3 | - | - | |
| 7 | Զրամատակարարում | 2264.5 | 2264.5 | 100 | |
| 8 | Փողոցների լուսավորություն | 318.4 | 318.4 | 100 | |
| 9 | Կրթություն նախադպրոցական | 3041.3 | 3041.3 | 100 | |
| 10 | Մշակույթ գրադարան | 949,0 | 949 | 100 | |
| 11 | Սոցիալական հատուկ արտոնություն | 650.0 | 650.0 | 100 | |
| 12 | Ոռոգում | 3750.0 | 3750.0 | 100 | |

| Հ/Հ | Ծախսերի անվանումը | 2019 պլան | Կատարողական | Կատարման % | Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ֆոնդային բյուջե | 11208.9 | -4254.5 | 38 | |
| 2 | Ընդհանուր բնույթի հանր. Ծառ. | 500,0 | 500.0 | 100 | |
| 3 | Ոռոգում | 30005.2 | 29965.2 | 99.9 | |
| 4 | Փողոցների լուսավորություն | 100.0 | - | - | |
| 5 | Ջրամատակարարում | 600,0 | 600.0 | 100 | |
| 6 | Օրենսդիր և գործադիր | 555.0 | 555.0 | 100 | |
| 7 | Պահուստային միջ. | 15948.7 | - | - | |
| 8 | Հողի իրացումից մուտք | -36500.0 | -35874.7 | 98.2 | |

Վանանդի համայնքապետ Ջ.Մանուկյան

գլխ.մասնագետ Լ.Աղաջանյան